## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան 2501,
Կ.Դեմիրճյանի անվ. հրապարակ 1,
Հեռ. (226) 43434,
Էլ. փոստ charentsavan.kotayq@mta.gov.am

N 983-16
*06 սեպտեմբեր 2016թ.*

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՊՈԱԿԻ ՊԵՏ ՊԱՐՈՆ Մ. ԱՆԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Անանյան,

Ի պատասխան Ձեր 2016 թվականի օգոստոսի 31-ի թիվ 01/04.1/3266-16 գրության հայտնում ենք, որ Չարենցավան համայնքի «Մաքուր Չարենցավան» ՀՈԱԿ-ի կարիքների համար սեղմված բնական գազի գնման «ՉՔ-ՄՉՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/8» ծածկագրով գնման ընթացակարգին «Դրայվ-2014» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 29.08.2016թ. թիվ 84/16 որոշումը գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո գնահատող հանձնաժողովի կողմից դադարեցվել է 03.08.2016թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 1.3 կետով՝ «Դրայվ-2014» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

*Կատ. ՝Վ. Չիլինգարյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

<<ՉՔ-ՄՉՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/8>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Չարենցավան _02_ _սեպտեմբերի_ _2016թ._

ժամը _10⁰⁰_

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Աբրահամյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Սարգսյանը, Խ. Գևորգյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Գաբրիելյանը

**1. <<ՉՔ-ՄՉՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/8>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի 03.08.2016թ. N 3 արձանագրության 1.3 կետով կայացրած որոշման դադարեցման մասին**
(Գ. Աբրահամյան)

1.1 Հիմք ընդունելով գնումների բողոքարկման խորհրդի 2016 թվականի օգոստոսի 29-ի թիվ 84/16 որոշումը՝ դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.08.2016թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 1.3 կետով՝ <<Դրայվ-2014>> ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

**2. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկների մասին**
(Գ. Աբրահամյան)

2.1 Մասնակիցների կողմից առաջարկված գնային առաջարկները ներկայացվում է ստորև.

| Հ/հ | Մասնակիցների անվանումները | Ընդհանուր նախահաշվային գինը | Առաջարկված գինը (առանց ԱԱՀ-ի) | Առաջարկված ընդհանուր գինը (ներառյալ՝ ԱԱՀ-ն) | Մինչև 15% գնային նախապատ-վություն (ԵՏՄ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | <<Դրայվ-2014>> ՍՊԸ | 2129220 | 1675814,43 | 2010977,32 | Տրվել է 15% գնային նախապատ-վություն (ՀՀ) |
| 2 | <<Արմինե>> արտադրական կոոպերատիվ | | 1774350 | 2129220 | Տրվել է 15% գնային նախապատ-վություն (ՌԴ) |

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

**3. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին**
(Գ. Աբրահամյան)

3.1 Հանձնաժողովի որոշմամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվում <<Դրայվ-2014>> ՍՊԸ-ն, երկրորդ տեղ՝ <<Արմինե>> ԱԿ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

4. Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարվելիք գործողությունների մասին
(Գ. Աբրահամյան)

4.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ.

բ) Ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016 թվականի սեպտեմբերի 07-ը ներառյալ, ներկայացնել հրավերի 2-րդ մասի՝ հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը.

գ) 4.1 կետի բ) ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկացությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | ______________ (ստորագրությունը) | Գ. Աբրահամյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | ______________ (ստորագրությունը) | Վ. Սարգսյան |
| | ______________ (ստորագրությունը) | Խ. Գևորգյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | ______________ (ստորագրությունը) | Գ. Գաբրիելյան |